



«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստան, 0025, Երևան, Կոլոմեի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏՈՒՄ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
Հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը լսելով ռեկտոր Բ.Գ.Դ.Այրոճի
Ա.Ա.Մուրադյանի ամփոփիչ ելույթը,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2017 թվականի բուհի աշխատանքները գնահատել բավարար (18-01-01-01):
2. Հանձնարարել՝
 - 1) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆ. Լ.Ռ.Ավետիսյանին և ֆակուլտետների
ղեկաններին՝ մինչև 2018թ. ապրիլի 10-ը ուսումնասիրել և վերհանել այն ամբիոնների կողմից
տարվող ուսումնական աշխատանքներում տեղ գտած խնդիրները, որտեղ գիտելիքների ստուգման
արդյունքներով պարբերաբար արձանագրվում է սովորողների ցածր առաջադիմություն (18-01-01-
02),
 - 2) հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր դոց. Գ.Ա.Ավետիսյանին՝ մինչև 2018թ.
հունիսը մշակել մեխանիզմներ պետպատվերի շրջանակում ԿԳ նախարարությանը հատկացված
կլինիկական օրդինատուրայի տեղերն առավել թիրախային օգտագործելու ուղղությամբ (18-01-01-
03),
 - 3) միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր դոց. Ե.Ս.Սահակյանին՝
աշխատանքներ տանել օտարերկրյա պետություններում ԵՊԲՀ-ի ճանաչելիության բարձրացման
ուղղությամբ, ընդլայնել մասնակցությունը օտարերկրյա լավագույն կրթական ծրագրերին՝
արդյունքների մասին պարբերաբար զեկուցելով գիտական խորհրդի նիստերին (18-01-01-04),
 - 4) գիտության գծով պրոռեկտոր պրոֆ. Կ.Բ.Ենկոյանին՝ ակտիվացնել գիտական հետազոտությունների
ուլորտում ազդեցության գործակցով հողվածների տպագրման գործընթացը՝ արդյունքների մասին
պարբերաբար զեկուցելով գիտական խորհրդի նիստերին (18-01-01-05):
3. Ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի պրոֆեսոր Նաիրա Մարտունի Գյուլազյանին շնորհել
պրոֆեսորի գիտական կոչում՝ որոշումը սահմանված կարգով ներկայացնելով ՀՀ ԲՈՀ-ի
հաստատմանը (18-01-01-06):
4. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ